

## հայատակացն առ թագաւորս վերաձայնութիւն սովորական, բաց 'ի

բազմաթիւս լինել անդ, եւ 'ի կէս ժԲ դարո՛ւ ունել Հիւրանցս, այլ եւ ողջոյն փողոց մի կամ թաղ յիւրեանց անուն, *Ruga Armenorum*, որ յիշի եւ 'ի դիւանական գրուածս (յամի 1222)\*: – Բ. ԱՆՏԻՈՔ եւ սահմանքն, ուր եւ յառաջ քան զգալուստ Խաչակրաց, եւ առ նոքօք եւ յիշխանութեան Բրնձացն եւս բնակէին ոչ սակաւք 'ի մերազնեայց:– Գ. ՊՏՂՈՍՄԱՅԻՍ կամ ԱՔՔԵԱ, գլխաւոր քաղաք զօրութեան եւ վաճառականութեան Արեւմտեայց յետ առման Երուսաղեմի 'ի Սալահէտտինէ. եր եւ աստ հիւրատուն Հայոց 'ի կէս ժԲ դարու, զոր Կի թագաւոր Լիզիներան շնորհեաց Տեստնեան ասպետաց, յամի 1190. բազմութեան Հայոց անդ եւ 'ի կէս ժԳ դարու (1248) վկայէ ունելն նոցին *Պայլ*, թէ եւ օտարանուն է յիշեալն յայնժամ (Գիսկարդ): – Դ. ԿԵՍԱՐԻՍ ՊԱՂԵՍՏԻՆՈՅ. 'ի սմին եւս լինել թուով ինչ Հայոց վկայէն Ասսիզք Երուսաղեմի, 'ի կէս ժԲ դարու\*\*:– Ե. ՏԻՒՐՈՍ եւ ՍԻԴՈՆ, ընդ որոց իշխողաց՝ մինչ յազատութեան էին, խնամութեամբ խառնեցան ազնուագունք Հայոց. որպէս Ֆիմի՛ դուստր Ա Հեթմոյ հարսնացեալ 'ի Յուլիան՝ տէր Սիդոնի կամ Սայտայ, Զապլուն՝ դուստր Բ Լեոնի՛ յԱմարի, եղբայր թագաւորին Կիպրոսի, որ եւ յետոյ Պայլ կղզւոյն:– Զ. ՔԱՐԱՔ (*Karak*) որ եւ ԿՐԱԿ, եւ զոյգ նմին ՇՈՒԲԱԿ (*Schaubak*), եւ ՍՈՆԸԱԼ, զի այսպէս կոչէին գլխաւորք եօթանեցուն բերդից այնր տէրութեան, որ սահմանորդ էր Եգիպտոսի, Արաբիոյ, Անապատին եւ Օովու. վկայ հասարակութեան Հայոց պահի ցարդ (յէջմիածին) Յայսմաւորք մի գրեալ 'ի Դրագարկ (յամի 1316), եւ պարզեալ *Ս. Գէորգ* եկեղեցւոյ Քարաքայ, 'ի Դ Լեոնէ, յամի 1330:– Այլ զանց արարեալ զայլովք փոքրագոյն սահմանօք, անմոռաց կացցէ եւ մնայ իսկ, Բ. ԿԻՊՐՈՍ կղզի, զորոյ հայկական բնակութեան եւ յիշատակաց մարթ էր ուրոյն դրուագ մի բանի գրել, զոր թողեալ գիտնագունից վանականաց մինչեւ ցայժմ անդ յաջորդեցելոց, շատ լիցի մեզ հաւաստել զմեծ բազմութիւն մերազնեայցս յԺԲ-Դ դարս՝ 'ի հաստատութենէ երկուց եպիսկոպոսական աթոռոց, 'ի Ֆամակոստա եւ 'ի Լեւկոսիա կամ Նիկոսիա. առաջինն վաղ բարձաւ, յերկարագոյն մնաց յերկրորդումն, որոյ ողջոյն թաղ մի կամ արուարձան յանուն աշխարհին Հայոց կոչէր, *Armenia*. եկեղեցին նուիրեալ էր *Ս. Աստուածածնի*. որ ոչ գիտեմ թէ նոյն իցէ եթէ որիշ՝ 'ի համանուն եկեղեցւոյ *Մաղուսայ*, որ յիշի յամի 1311. յորում ժամանակի ճոխաբար փայլէր եւ ձեռնտու լինէր բանասիրաց եւ հոգեսիրաց՝ *Ալիծ* դուստր Հեթմոյ Լամբրունեցւոյ, կին գովով սենեսկալին Կիպրոսի: Ի սահմանս անդ մայրաքաղաքին յիշին եւ գետք Հայոց, *Ճիպս* (յամի 1306), ուր եւ եկեղեցի յանուն *Ս. Հրեշտակապետաց*. 'ի նորագոյն դարս՝ *Պլատանի* (*Platani*), եւ *Կոռնոկիպոյ* (*Kornokipos* կամ *Cornogibo*). 'ի սահմանս Ֆամակոստայ՝ *Սպաթարիոյ* (*Spathario* կամ *Spathariko*). 'ի սմին քաղաքի էին, կարծեմ, եկեղեցիքն *Ս. Զօրավար* (*Սարգիս*) եւ *Ս. Վառվառէ*, յիշեալք յամի 1287, առ Բ Լեոնիս: Յիշի եւ մեծ եկեղեցի մի Հայոց 'ի *Պիսկոպիա* (*Piskopia*, *Episcopie*, որ եւ *Lapais*), ուր էր եւ մենաստան Պրեմոնադրատեանց, յորում կրօնաւորեցաւ տէրն Կոռնոկի Հեթում Պատմիչ: Ծանօթագոյն է այժմեան շէն մենաստանն Հայոց եւ առաջնորդարան, *Ս. Մակար*:– Քաջահմուտ տեղագրող եւ պատմիչ Կիպրոսի՝ կոմսն Մապաղրի, իբր երեսուն ամօք յառաջ՝ 50 կամ 60 տունս Հայոց գրէր 'ի սահմանս Նիկոսիոյ:– Ի ԺԲ-Ե դարս յիշին շինականք Հայք բնակեալք 'ի հովիտս Միսսորէ (*Missore*) եւ 'ի *Կերիներս* կամ *Չերիներս* լերինս. թերեւս նոքա մշակէին *զՀայկական* անուանեալ այգիսն, զոր յիշեցաք 'ի Տեղագրութեանս (յէջ 13):

\* **Böhmer**, II, 142.

\*\* **Beugnot**, *Les Assises de Jérusalem*, II, 511, 528.